

ԱՄԲՈՂԸ ԹԻԿՆԱԳՈՐԸ

BOOKMORRIS

Robert Penn Warren

ALL
THE KING'S MEN

A novel

BOOKMARK

Ռոբերտ Փեն Ուորեն

ԱՐՔԱՅԻ
ԱՄԲՈՂԶ ԹԻԿՆԱԳՈՐԸ

Վեպ

Թարգմանությունն անգլերենից՝
Կարլեն Դալարյանի



ԵՐԵՎԱՆ
2021

ՀՏԴ 821.111(73)-31 Ուորեն
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-44
Ու 660

Ուորեն Ռոբերտ Փեն
Ու 660 Արքայի ամբողջ թիկնագործը: Վեպ / Ռոբերտ Փեն Ուորեն; Թարգմ.՝
Կ. Դալլաքյան.- Եր.: Newmag, 2021.- 596 էջ:


Չեղինակը վերնագիրը վերցրել է «Գնդիկ Բլքիկը» (Humpty Dumpty) մանկական շուտասելուկից: Վեպը խարիզմատիկ, պոպուլիստ գործիչ Վիլի Ստարկի մասին է: Չարավային մի նահանգում նա քաղաքական կոշտ գիծ է առաջ մղում Մեծ ճգնաժամի տարիներին: Ընդունված է համարել, որ կերպարի նախատիպն ԱՄՆ սենատոր Չյու Լոնգն է, որը սպանվեց 1935-ին: Վեպը գրված է առաջին դեմքով: Ջեկ Բարդենը նահանգապետի աջ ձեռքն է, նախկին լրագրող, որը ներկայացնում է իր շեֆի՝ Վիլի Ստարկի քաղաքական վերելքի և կառավարման դրամատիկ դրվագները: Ստարկի կարիերան ներհյուսված է Ջեկ Բարդենի կյանքի պատմությանն ու փիլիսոփայական մտորումներին: «Վիլի Ստարկի պատմությունն ու Ջեկ Բարդենի պատումը որոշ իմաստով միևնույն պատմությունն են», – նկատել է գրողը:

ՀՏԴ 821.111(73)-31 Ուորեն
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-44

ISBN 978-9939-884-24-0
Copyright © 1946 by Robert Penn Warren.
Copyright © renewed 1974 by Robert Penn Warren.
Copyright © 2001 by Rosanna Warren and Gabriel Warren
Additional text copyright © 2001 by Noel Polk
Armenian Translation © 2021 by Newmag Publishing House
Ռոբերտ Փեն Ուորեն «Արքայի ամբողջ թիկնագործը» © 2021, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն հրատարակության իրավունքը պատկանում է «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքը ձեռք է բերվել Houghton Mifflin Harcourt հրատարակչության հետ կնքված պայմանագրով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



ԳԼՈՒԽ 1	9
ԳԼՈՒԽ 2	72
ԳԼՈՒԽ 3	152
ԳԼՈՒԽ 4	216
ԳԼՈՒԽ 5	263
ԳԼՈՒԽ 6	315
ԳԼՈՒԽ 7	368
ԳԼՈՒԽ 8	423
ԳԼՈՒԽ 9	480
ԳԼՈՒԽ 10	541

Նվիրում եմ Ջասթին և Դեյվիդ Միտչել Կլեյներին

Bookmarkark

Mentre che la speranza ha fior del verde...
La Divina commedia, Purgatorio, III

Ջավերժ սերը չի կորցնում իսպառ նա,
Ով կարող է դեռ դարձի գալ զղջումով:
*Դանթե, Աստվածային կատակերգություն, Քավարան, III*¹

¹ Թարգմանությունը՝ Արբուն Տայանի, 1983, ԵՊՀ հրատարակչություն: (Ծանոթագրությունները՝ newmag-ի):



ԳԼՈՒԽ 1

Մեյգոն Սիթի:

Այնտեղ հասնելու համար գնում եք քաղաքից դեպի հյուսիս-արևելք 58-րդ մայրուղով¹. դա մի լավ ու նոր մայրուղի- է: Կամ նոր էր գոնե- այն օրը,- երբ մենք անցանք: Նայում եք մայրուղուն, և այն մղոններ շարունակ ուղղաձիգ վազում- է դեպի- ձեզ, սլանում- կենտրոնի- իր սև գծով,- սև-ու ողորկ,- սպի- տակ բետոնի վրա կուպրի նման փայլփլող գծով, անվաղողների դժժոցի ուղեկ-ցուրթ-յամբ,- ու սպիտակ- բետոնից- վեր ծորում- է տաք մուժն այնպես,- որ միայն սև գիծն է երևում:- Եթե- չդադա-րեք- աչքներդ- հառել- նրան, մի քանի- անգամ- խորը- շունչ չքաշեք- ու մի լավ չհասցնեք- ձեր ծոծրա-կին՝ կիպսոն-- սանաք- և-ուշքի- կգաք միայն այն պահին,- երբ առջևի- աջ անի-վը- բետոնից- կցատկի- եզրի- սև ցեխի- մեջ. դուք կփորձեք- դեպի- ձախ շրջել դեկը,- բայց չեք կարողանա, որովհետև բետոնե սալիկը մայթի նման բարձր է, ու թերևս միայն մեքենան ճանապարհամերձ առվակն ընկնելուց առաջ փորձ անեք ձեռքն առաջ մեկնել բանալուն հասնելու համար: Բայց, իհարկե, չեք հասց- նի: Հետո մի մղոնաչափ հեռվում բամբակենի մշակող սևամորթը գլուխը կբարձրացնի, կտեսնի սև ծխի սյունը բամբակենու շարքերի թունակա- նաչից վեր, շիկացած երկնքի մետաղե չարագույժ կապույտի մեջ, և կասի. «Տե՛ր,- փրկիր, այս մեկն էլ գլուխկոն-ծի- տվեց»: Կողքի- շարքում- կանգնած- սևամորթը նույնպես կասի. «Տե՛ր, փրկիր»: Առաջին սևամորթը կքրքջա,

¹ ԱՄՆ-ում բոլոր ավտոմայրուղիներն ունեն համարներ: Սովորաբար զույգ թվերը տրվում են արևելքից արևմուտք, կենտ թվերը՝ հյուսիսից հարավ տանող ճանապարհներին:

բրիչը վեր կխոյանա նորից, ու շեղքն արևի տակ կփայլի հելիոգրաֆի նման: Մի քանի օր անց ճանապարհային ուստիկանության տղաներն այս տեղում,- ճամփեզ-րի- սև ցեխի- մեջ, երկա-թե- ձող կխրեն՝ վրան սպիտակ- թիթեղյա քառակուսի՝ սև գանգի ու խաչաձևված ոսկորների պատկերով: Հետո խոտից վեր կծգվի պատատուկն ու կփաթաթվի ձողին:

Բայց եթե- դուք ժա-մանա-կին- ուշքի- գաք ու չթողնեք,- որ անի-վը- դուրս ցատկի- բետո-նից,- կսլանաք- տաք մուժի- միջով,- և պահ առ պահ հենց մուժի- միջից ձեր դիմաց կխոյանան ու կողքից կսուրան ուրիշ ավտոմեքենաներ այնպիսի ոռնոցով, որ կթվա՝ ամենագոր Աստված ինքն է մերկ ձեռքերով պոկում երկաթյա տանիքը: Հեռու առջևում, հորիզոնի մոտ, որտեղ բամբա- կի դաշտերը ձուլվում են սպիտակ երկնքին, բետոնը կփայլվիլա ու կշողշո- դա, ասես ճանապարհը ջրի տակ սուզվելիս լինի:

Դուք սուրում- եք դեպի- նա, բայց այն միշտ ձեր առջևում- է, այդ միրա-- ժանման շողշողուն ու հեղեղված կետը: Սուրում եք մետաղյա ձողերի վրա տնկված փոքրիկ թիթեղյա քառակուսիների կողքով, որոնց վրա գանգի ու խաչաձևված ոսկորների պատկերներ են: Որովհետև սա այն երկիրն է, որտեղ վաղուց իր տիրապետությունն է հաստատել ներքին այրման շարժիչի դարը,- որտեղ- ամեն- մի տղա Բարնի- Օլդֆիլդ-² է, իսկ աղջիկ-նե-րը- մարմաշ- ու բատիստ են հագնում և ցանցկեն գործվածք, բայց եղանակի պատճառով առանց վարտիքի են ման գալիս և այնպիսի ողորկ, փոքրիկ դեմքեր ունեն, որ սիրտդ ճմլվում է, ու երբ ավտոմեքենայի արագությունից քամին նրանց քունքերի մազերը հետ է տանում, քրտինքի փայլուն, փոքրիկ կաթիլներ են երևում մաշկի վրա: Աղջիկները խորը ընկղմվում են նստոցների մեջ՝ բա- րալիկ- իրան-նե-րը- հակած,- ծնկները,- որքան- կարե--լի է, վեր տնկած, բայց ոչ կիպ սեղմած, որպեսզի հով փչի հովհարիչից, եթե, իհարկե, դա կարելի է հով կոչել:

Սա այն երկիրն է, որտեղ բենզինի և այրվող արգելակների հոտն ու կանգառի կարմիր ազդանշանն ավելի քաղցր են, քան մյուռոնը, որտեղ ութմխոցանի հսկաները ոռնոցով պտույտներ են գործում կարմիր բլուրնե- րի մեջ՝ ցրիվ տալով- խճաքա-րե-րը,- ինչպես- ջուրը,- իսկ երբ հարթա-վայր- են

² Berna Eli “Barney” Oldfield (1878 -1946) Բեռնա Իլայ «Բարնի» Օլդֆիլդ - հայտնի ամերիկացի հեծանվորդ և ավտոարշավորդ, որի անվանումը 20-րդ դարի 20-ականներին արագության հո-մանիշն էր: Առաջինն է վարել մեքենա 96 կմ/ժ արագությամբ:

իջնում ու սուրում նոր ճանապարհով, օ՛, Աստված, գթա ճամփորդներին³: Երբ ճանապարհի 58-րդ մայրուղով մի քիչ էլ ես շարունակում, տեղանքը փոխվում- Է: Չարթա-վայ-րը- և բամբա-կի- մեծ դաշտե-րը- մնում են հետևում, մեծ շենքի մոտակայքի կաղնիների կույտը՝ նույնպես, նաև բամբակի դաշ- տի երկայնքով շարված միանման ճերմակեցրած խրճիթները, որոնց հենց դռան մոտից սկսվում է բամբակի դաշտը, և որտեղ սևամորթ մանչուկը նստած իր բուլթ մատն է ծծում ու նայում,- թե ինչպես- եք դուք սուրում--անցնում:- Այդ ամեն-ը- մնում է հետևում:- Չիմա- միայն կարմիր- բլուրներ- են, ցանկապատերի երկայնքով ձգվող մորու թփեր, փոսորակներում սևին տվող պուրակներ, մեկ էլ հազվադեպ, նորաբույս եղևնուտներ, եթե միայն արդեն չեն հրկիզել ոչխարի արոտի համար, իսկ եթե հրկիզել են, ապա՝ սևաչք կոճղեր, բլուրները գոտևորող հեղեղատներով կտրտված բամբա- կենու ցանքեր, եգիպտացորենի դեղնած, անշարժ տերևներ:

Ժամանակին այստեղ եղևնու անտառներ են եղել, բայց վաղուց արդեն չկան: Ելուզակներ հայտնվեցին, սղոցարաններ ու վարկատու խանութներ հիմնեցին, նեղգիծ երկաթուղի անցկացրին և սկսեցին օրական մեկական դուլար վճարել: Աստված գիտի՝ որտեղից ժողովուրդ վրա տվեց՝ ֆուրգոն- ներով, ճամպրուկներով և մահճակալներով, իրենց հինգական երեխանե- րով, ծխախոտ ծամող, լաչակավոր կնիկներով ու սրանց կրծքից կառչած ծծկերներով: Սղոցները սոպրանո էին երգում, խանութպանը մեղրաջրի սև օղի- եր չափում,- կշռում եր խոզա-պուխտն- ու գրանցում- պարտքե-րի- գրքում: Յանկիի դուլարը և հարավցիների բթութունը բուժում էին քառամյա եղբայ- րասպան կռվի վերքերը⁴, ու ամեն- ինչ թվում եր հեշտ ու հանգիստ,- ուրախ- ու զվարթ: Եվ մեկ էլ հանկարծ- տեսան,- որ այլևս եղևնի- չմնաց: Սղո-ցա--րան- ներն ավերեցին: Երկաթուղին խոտով ծածկվեց: Ժողովուրդը խանութները պոկոտեց-տարավ որպես վառելափայտ: Այլևս օրական դուլարը չկար: Պա- րագլուխները չքվեցին ադամանոյա մատանիների ու թանկարժեք մահու- դի բեռով:- Բայց եղան- մարդիկ,- որ մնացին:- Մ-նա-ցին տեսնե-լու,- թե ինչպես-

³ Անգլիացի հայտնի գրող Սեմյուել Թեյլոր Զոլրիջի (S. T. Coleridge, 1772-1843) «Պոեմ ծեր նավաստու մասին» (The Rime of the Ancient Mariner, 1798) ստեղծագործության վերածնակերպումն է: «Գթա, Աստված, ծեր նավաստուն: Փրկիր նրան ժանտախտ բերող ախոյանից» (God save thee, ancient Mariner! From the fiends that plague thee thus!):

⁴ Նկատի ունի 1861-65 թթ. քաղաքացիական պատերազմը: Եղբայրասպան ձևակերպումը բիբ- լիական փոխակերպում է: «Ասէ Աբրամ ցՂովտ. Մի լիցի կռիւ ընդ իս եւ ընդ քեզ, եւ ընդ հովիւս իմ եւ ընդ հովիւս քո. զի արք եղբարք եմք մեք», Ծննդոց, ԺԳ, 8:

են փոստրակները մխրճվում կարմիր կավի մեջ: Մնացին Մեյզոն Սիթիում իրենց սերունդներով ու օրինաժառանգներով՝ մի 4000 մարդ, ոչ ավելի:

Դուք քաղաք եք մտնում 58-րդ մայրուղով, բամբակի գործարանի ու էլեկտրակայանի մոտով, անցնում եք սևամորթների խրճիթների երկար շարքի կողքով, մի փողոցով, որի երկու կողմերում շարված են տնակներ՝ թիթեյա տանիքներով, պատշգամբների քիվերին՝ ժանյականախշ փորագրություններ, տնակներ, որոնք ինչ-որ ժամանակ եղել են ճերմակ ներկված: Անցնում եք բակերի մոտից, որտեղ ծառերի սաղարթը տապից թուլա-ցել,- թռչնում- է: Եվ ձեր՝ 40 մղոն⁵ արագությամբ ընթացող 80 ձիաուժանոց մեքենայի քաղաքավարի շշնջոցի միջից ականջ եք դնում կանաչի մեջ մխրճվող հուլիսյան ճանճերի բզզոցին:

Այդպիսին ես տեսա Մեյզոն Սիթին վերջին անգամ, շուրջ երեք տարի առաջ, 1936-ի ամռանը: Ես առաջին մեքենայի՝ կադիլակի մեջ էի Բոսի, միստր Դաֆիի,- Բոսի- կնոջ ու որդու,- նաև Շաքար---Մանչի- հետ: Երկրորդ-մեքենայում՝ դիակառքի ու օվկիանոսային նավի այդ խառնուրդում, որն այնքան պերճաշուք չէր, որքան մերը, բայց որի համար, այնուամենայնիվ, չէիք կարմրի որևէ գյուղական ակումբի կանգառում, գտնվում էին լրագրողներ, լուսանկարիչը և Սեդի Բյորքը՝ Բոսի քարտուղարուհին, որը հետևում էր, որ վերջին-ներս- չափից- դուրս չիմեն և-ի վիճա-կի- լինեն- կատարելու այն, ինչ վերապահված էր իրենց:

Շաքար-Մանչը վարում էր կադիլակը, և հաճելի էր նրան դիտելը: Կամ հաճելի կլիներ, եթե կարողանայիք ազատվել այն մտքից, թե ինչի կվերածվեին մոտ երկու տոննա թանկարժեք մեխանիզմներն 80 մղոն⁶ արագությամբ մի երեք անգամ գլուխկոնծի տալուց հետո, և ձեր ուշադրությունը սևեռեիք մկանների համագործակցության, սատանայական հումորի և կայծակնային կողմնորոշման վրա, որը ցուցադրում էր Շաքար-Մանչը՝ շեշտակի վազանցելով խոտով բարձած սայլը՝ դիմացից սուրացող վիթ-խարի բենզատարին ընդառաջ, և մեքենան նետելով աներևակայելի նեղ արանքը, որպեսզի մի կողմից բենզատարի վարորդին ինֆարկտի դուռը հասցնի, մյուս կողմից անվակամարի եզրով սրբի ջորու լորձուկը: Բոսին, սակայն,- սա դուր էր գալիս:- Նա միշտ նստում էր առջևում,- Շաքար---Մանչի-

⁵ 64 կմ/ժ արագություն:

⁶ 128 կմ/ժ արագություն:

կողքին, աչքը գցում էր մե՛կ արագաչափին, մե՛կ ճանապարհին, ժպտում էր Շաքար---Մանչին,- երբ նա սուրում- էր բենզա-տա-րի- ու ջորու- քթի արան-- քով: Եվ Շաքար---Մանչի- գլուխը- ցնցվում էր ինչպես- միշտ այն պահե-րին,- երբ բա-ռերը- լռվում էին նրա կոկոր-դում- ու չէին ուզում- լույս աշխարհ- գալ:

— Շ-2-2-ուն,- ատամների արանքից նետում էր նա, ու բերանից թուլքն էր ցայտում:- — Շ-2--շան ո-որ-դի, ն-ն-նա հո տ--տե-ս-ն-նում է, ո-որ ե-ես գ-գ-գա-գա-լիս եմ,- և թուլքը- հասնում- էր ապա--կուն:

Շաքար-Մանչը խոսել չէր կարողանում, բայց կարողանում էր ամեն ինչ արտահայտել, հենց որ ոտքը դնում էր արագացուցիչին: Նա չէր կարող հաղթել դպրոցական բանավեճում, թեև հազիվ էլ նրա հետ վիճաբանել ցանկա-ցող- գտնվեր, հատկա-պես- նա, ով ճանա-չում- կամ տեսել- էր, թե ինչ- պես է նա գործի- դնում իր 9.65 մմ--ոցը,- որ ուռուց-քի- նման տնկված էր նրա թևատակին:

Անկասկած, դատելով նրա անունից, մտածում եք, թե Շաքար-Մանչը սևամորթ- էր: Ոչ, նա սևամորթ- չէր: Նա իռլան-դա-ցի- էր, իսելա--ռի մեկը:- Հասակը- 1.57 էր, և թեպետ- ընդա-մե-նը- 27-28 տարե-կան- էր, արդեն- լավ ճաղա--տացել էր: Կապում էր կարմիր փողկապներ, փողկապի և շապիկի տակից՝ շղթայիկով մի փոքրիկ կաթոլիկական մեդալ, և ես ամբողջ հոգով ուզում էի հուսալ,- որ դա Սուրբ Զրիս-տո-Ֆերն- էր⁷, և-որ Սուրբ Զրիս-տո-Ֆե-րը- մեզ չէր լքի: Նրա ազգանունը Օ՛Շին էր, բայց Շաքար-Մանչ էին կնքել, որովհետև շաքարը բերանից չէր պակասում: Հենց որ ռեստորան էր մտնում, շաքարամա-նի- մեջ եղած- ամբողջ- շաքա-րը- վերցնում- էր: Ման էր գալիս՝ գրպան-ները- շաքա-րի- կտորնե-րով- լցված, ու երբ շաքա--րը բերանն- էր գցում, վրան ծխախո-տի- մնացորդ-ներ- կամ գորշ թելեր- էին լինում,- որոնք- միշտ գրպա- նից անպակաս էին: Շաքարի կտորը նա նետում էր փոքրիկ, ծուռումուռ, սև ատամների ցանկապատից ներս, նրա սիհար իռլանդական այտերը փոս էին ընկնում, և ինքն ամբողջովին նմանվում էր մի թերսնված լեպրեխոնի⁸:

Բոսը նստած էր առջևում, աչքը՝ արագաչափին, իսկ կողքին իր որդին էր՝ Թոմը:- Այն ժամա-նակ- Թոմը,- լավ չեմ հիշում,- 18 թե 19 տարե-կան- էր, բայց նրան ավե-լին- կտայիք:- Այնքան- էլ բարձրա-հա-սակ- չէր, բայց հասուն- տղա-մարդու կազմվածք ուներ, ու գլուխն էլ տղամարդավարի նստած էր ուսերին,

⁷ Ճամփորդների հովանավորը:

⁸ Լեպրեխոն կամ լեպրեկոն - իռլանդական ժողովրդական բանահյուսության կերպար, ավանդաբար պատկերվում է որպես փոքր, կարճահասակ, ամրակազմ մարդ:

այլ ոչ թե ցցված նիհարիկ պարանոցին, ինչպես այլ պատանիներինը: Դեռ դպրոցում նա ֆուտբոլի դաշտի հերոսն էր, իսկ անցյալ աշուն նահանգի առաջին կուրսեցիների թմի ամենափայլուն աստղը դարձավ: Իսկապես լավն էր, ու թերթերը գրում էին նրա մասին: Եվ ինքն էլ գիտեր, որ լավն է: Բավական էր մի հայացք զգել նրա հարթ, գեղեցիկ, արևից թխացած դեմքին, ծամոնը հանդարտ ու անտարբեր մշակող ծնոտին, ծանրադիր ունքերի տակից նայող երկնագույն աչքերին, որոնք նույնչափ հանդարտ ու անտարբեր զննում էին քեզ և ամբողջ աշխարհը. գրողի ծոցը գնա այդ աշխարհը: Այն օրը, երբ նա նստած էր Վիլյի Ստարկի, այսինքն՝ Բոսի կողքին, ես նրա դեմքը չէի տեսնում: Բայց հիշում եմ, թե ինչպես մտքովս անցավ, որ գլխի և՛ ձևով, և՛ դրվածքով նա իր հայրիկին է հիշեցնում:

Միսիս Լյուսի Ստարկը՝ Բոսի կինը, Պստիկ Դաֆին ու ես նստել էինք հետևում, Լյուսի Ստարկը՝ Պստիկի և իմ միջև: Դա բնավ էլ ուրախ ընկերակցություն չէր: Շոգը չէր նպաստում լեզուները բացվելուն, իմ ուշադրությունը զամված էր բենգատարներին ու խոտով բարձած սայլերին, և վերջապես Դաֆին ու Լյուսի Ստարկն այնքան էլ հաշտ չէին իրար հետ: Մի խոսքով, Լյուսին նստել էր Դաֆիի և իմ արանքում և անձնատուր էր եղել սեփական մտքերին: Կարծում եմ՝ մտածելու շատ բան ուներ: Այ, օրինակ, նա կարող էր մտածել, թե ինչեր են անցել-գնացել այն օրից, երբ ինքը մի ջահել աղ ջիկ էր ու իր առաջին ուսուցչական տարին էր սկսել Մեյգոն Սիթիի դպրոցում, ինչպես ամուսնացավ կարմիր դեմքով, կարմիր վզով գեղջուկ, ծանր մեծ ձեռքերով, մուգ շագանակագույն մազափունջը ճակատին այս տղայի հետ, որ իրեն՝ Լյուսիին, նայում էր շան նվիրվածությամբ ու հիացական հա յացքով (կարող էք նայել հարսանեկան լուսանկարը, որ Վիլյիի հագարա վոր ուրիշ նկարների հետ տպվել է թերթում): Արագընթաց կադիլակի մեջ Լյուսին մտածելիք ուներ, որովհետև այն օրից ի վեր շատ բան էր փոխվել:

Յրապարակ դուրս եկանք այն փողոցով, որտեղ ժամանակին ճերմակ տնակներ էին կառուցվել: Շաբաթ էր, հետճաշյա պահը, ու հրապարակը լեցուն էր ժողովրդով: Գազոնի շուրջը հաստատուն խարիսխ էին զցել սայլակներն ու զամբուղները, իսկ կենտրոնում դատարանի շենքն էր, մի աղյուսե տուփ, որ եղանակից բավական հայտնաշ էր եղել ու ներկվելու կարիք էր զգում: Կառուցվել էր քաղաքացիական պատերազմից առաջ. մի աշտարակ ուներ՝ չորս կողմից ժամացույցներով զարդարված: Ստիկից դիտելիս երևում էր, որ ժամացույցներն իրական չեն: Դրանք պարզապես

Նկարված էին ու միշտ ցույց էին տալիս ժամը հինգը, և ոչ բնավ ութ անց տասնյոթը, ինչպես ցույց է տալիս խղճուկ ոսկերչական խանութի վրա նկարված ժամացույցը: Մենք մխրճվեցինք առևտրով զբաղված մարդ կանց բազմության մեջ: Շաքար-Մանչն ուժ տվեց ազդանշանին, նրա գլուխը սկսեց ցնցվել, բերանը բացվեց.

— Շ-շու-ն շ-շ-շա-նո-որ-դի-ներ, –ասաց, ու թուրը թռավ:

Հասանք դեղատուն, ու մինչ Շաքար-Մանչը կարգելակեր դռան մոտ, երիտասարդ Թոմը դուրս թռավ, նրա հետևից էլ՝ Բոսը: Ես իջա ևօգնեցի Լյուսի Ստարկին, որը, չնայած շոգին ու այլևայլ մտքերին, արդեն բա վական ուշքի էր եկել, որպեսզի ասեր՝ շնորհակալ եմ: Նա մի պահ կանգ առավ մայրին, շրջազգեստն ուղղեց ազդրերի հատվածում (դրանք այժմ մի քիչ ավելի գեր էին, քան, անկասկած, այն ժամանակ, երբ նա նվաճեց Վիլի Ստարկի՝ գեղջուկ տղայի սիրտը):

Միստր Դաֆին կաղիլակից դուրս մղեց իր զանգվածեղ մարմինը, ու մտանք դեղատուն: Բոսը դուռը բաց թողեց, որպեսզի Լյուսի Ստարկն անցներ, և ինքը հետևեց նրան: Մյուսներս շարժվեցինք նույն ուղղությամբ: Ներսում շատ մարդ կար: Արտահագուստներով տղամարդիկ խռնվել էին գազավորված ջրի սեղանի մոտ, շլացուցիչ տեսք ունեցող անպետք իրերով հեղեղված վաճառատեղանների շուրջ կանայք ոտքերը կախ էին ցցել, երեխաներն էլ, մի ձեռքով մայրերի շրջազգեստներից կառչած, մյուսով պաղպաղակը բռնած, թաց քթիկների վրայով նայում էին մեծե ռի աշխարհին այնպիսի աչքերով, որոնք հիշեցնում էին կեղծ մարմարից պատրաստված չինական գնդիկներ: Բոսը՝ գլխարկը ձեռքին, խոնավ մազափունջը ճակատին, համեստորեն կանգնել էր գազավորված ջրի հեր թի վերջում: Հագիվ մի րոպե մնաց կանգնած, հետո պաղպաղակ լցնող աղջիկներից մեկը նկատեց նրան և, դեմքն այնպես փոխվեց, ասես եկեղեցում կտրվել էր նրա գուլպաները պահող գոտին: Նա վար ցցեց գդալն ու շտապեց դեղատան հետևամասը՝ ազդրերը կանաչ խալաթի տակ այն պես թափահարելով, որ թվում էր՝ զնագոց պիտի լսվեր:

Ապա, մի վայրկյան անց, ճաղատ գլխով փոքրամարմին մի մարդ՝ սպիտակ բաճկոնով, որ վաղուց վանալու կարոտ էր, հետին սրահից խուժեց բազմության մեջ ձեռքը թափահարելով, սրան-նրան դիպչելով և բացականչելով՝ Վիլին Է: Մարդը վազեց դեպի Բոսը, ու Բոսն էլ մի երկու քայլ արեց դեպի նա, և սպիտակ բաճկոնավորն այնպես կառչեց Վիլիի